ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱ-ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ն ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԽԱՇՁԲ-22/21

ք.Ապարան «07» 05 2021 թ.

«Ապարանի համայնքապետարանը», ի դեմս համայնքի ղեկավար Կ.Եղիազարյան-ի, ով գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Հազարաշեն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ.Իգթյանի, ով գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական** աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող

աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 407000 (չորս հարյուր յոթ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները,

գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող

պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ապարանի համայնքապետարան	"Հազարաշեն" ՍՊԸ
Ք. Ապարան, Բաղրամյան 26	0014 ք. Երևան, Պ. Սևակի, 1
ՀՎՀՀ 05022969	"Հայբիզնեսբանկ" ՓԲԸ
ՀՀ Ֆին. Նախ. Գործառնական վարչություն	Հ/հ 11500821114211
ՀՀ 90045000079	ՀՎՀՀ 01816381
Համայնքի ղեկավար՝ Կ. Եղիազարյան	Տնօրեն Ռ. Իգիթյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«07» 03 2021 թ. կնքված
ՀՀ-ԱՄ-ԱՀ -ԳՀԽԱՇՁԲ-22/21 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

աշխատանքի								
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	միավոր գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	Կատարման	
							հասցեն	ժամկետը
1	71241200/3	Ապարան քաղաքի Մ.Մաշտոց փողոցի թիվ 11 բազմաբնակարան բնակելի շենքի պատշգամբների թիթեղապատման,ներկման և ցեմենտ/ավազի շաղախով սվաղման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների *նկարագիրը* 1. բաց պատշգամբների գոյություն ունեցող մետաղական ճաղավանդակների լրացուցիչ ամրացում 2.լրացուցիչ մետաղական ճաղավանդակի մոնտաժ գոյություն ունեցող ամրացված ճաղավանդակի վրա ուղղանկյուն մետաղական 40*20*2.5 մմ,20*20*2.0 մմ խողովակներ,30*3.0 մմ	դրամ	175000	175000	1	Ք.Ապարան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 45-րդ օրացուցային օրը ներառյալ

		մետաղական գոտի,16*16 մմ մետաղական ձող նյութերի օգտագործմամբ 3.Ճաղավանդակների թիթեղապատում 05 մմ RAL կատալոգի 8017 մատովի խամեր/շոկոլադագույն թիթեղով 4.բաց պատշգամբների ներքին պատերի և առաստաղի հասարակ սոսնձաներկում,գունանյութով 5.շենքի մուտքերում փայտյա լուսամուտների քանդում և նոր մետաղապլաստիկ լուսամուտների տեղադրում 6.փակ պատշգամբների առանձին հատվածներում ցեմենտ/ավազի շաղախով տեղադրված սվաղի վերականգնում 7. բաց և փակ պատշգամբներում փայտյա պատուհանների և դռների յուղաներկում,նյութերի 8.փակ պատշգամբներում բետոնից կամ քարից կառուցված պատերի ںրտաքին ճակատների ցեմենտ/ավազի Էմուլսիոն շաղախով սվաղ ,շաղախի ցրման եղանակով գունանյութով մինչև 15 մ բարձրության վրա (штукатурка обрызгом ручным способом щеткой) 9.տուֆ քարից կառուցված պատերի մաքրում ճնշումային ավազաշիթով,պատերի 3.0 մ բարձրության չափով 10.բոլոր աշխատանքների իրականացումը, բացի թիվ 9-ի տակ նշված աշխատանքի,կատարվելու են մինչև 15 մ բարձրության վրա 11 . մինչև աշխատանքային նախագծերի մեկնարկը պատվիրատուին ներկայացնել տարածքի վերաբերյալ 2 տարբեր լուծում						

		նկարներով (ռենդեռ) 3 D մոդելավորում **Աշխատանքների ծավալը** 1.թիթեղապատվող ճաղավանդակների մակերեսը 280.0 քմ 2.բաց պատշգամբների ներքին պատերի և առաստաղի ներկվող ընդհանուր մակերեսը 607.0 քմ 3.նոր տեղադրվող պատուհաններ 35.8 քմ 4.փակ պատշգամբներում արտաքին բետոնյա պատերի վրա վերականգնվող սվաղի մակերեսը 35.0 քմ 5.փակ և բաց պատշգամբներում փայտյա պատուհանների,պատշգամբների և դռների յուղաներկման մակերեսը 123.0քմ 6.արտաքին պատերի գունանյութով սվաղի մակերեսը 640.0քմ 7.ավազաշիթով մաքրվող պատի մակերեսը 324.0 քմ **Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման պայմանները** 1.Նախագիծը մշակել ՀՀ-ում գործող ստանդարտների,նորմերի,հրահանգների պահանջներին համաձայն և աշխատանքների ծավալները հիմնավորված՝հետազոտման ընթացքում ձեռք բերված ելակետային տվյալների վերլուծության հիման վրա և գործող նորմերին համապատասխան 2.Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել 3 օրինակից 3.Նախագծի էսքիզային առաջարկի և նախագծա- նախահաշվային փաստաթղթերի միջանկյալ և վերջնական համաձայնեցում Ապարանի համայնքապետարանի հետ						

		4.Ներկայացնել կառուցապատվող օբյեկտի ,դրա առանձին մասերի և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետ ներին ներկայացվող նվազագույն պահանջները 5.ներկայացնել կառուցապատվող տեղամասում գոյություն ունեցող, գործող ինժեներական ենթակառույցների և կոմունիկա ցիաների անհրաժեշտության դեպքում վերակառուցման,վերանորոգման նախագծային լուծումների առաջարկություններ 5.Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային,տեխնիկական միջոցներին,աշխատան քային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները,շինարարական աշխատանքների համար կազմել ընդհանուր և ըստ փուլերի առանձին ծավալաթերթ նախահաշիվ 6.Նախագիծը համաձայնացնել շահագրգիռ կազմակերպությունների հետ 7.Նախագիծը և նախահաշիվը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,հայերեն և ռուսերեն լեզուներով (ACAD PDF ֆորմատներով),ծավալաթերթերը,ամփոփագ րերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով 8.Նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարման գինը՝մինչև						

		նախահաշվային արժեքի 2% –ի չափով 9.Նախագծա-նախահաշվային աշխատանքների վճարումը կատարել դրանք փորձաքննության դրական եզրակացությունից հետո						
2	71241200/4	**Ապարան քաղաքի Մ.Մաշտոց և Զ.Դարյան փողոցների թիվ 11 և թիվ 23 բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքում մանկական խաղահրապարակի և մարզահրապարակի կառուցման բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների** **Աշխատանքի նկարագիրը** 1.գոյություն ունեցող խաղահրապարակի խաղային հարմարանքների,սարքավորումների և մետաղական խողո վակների ապամոնտաժում 2.հողային աշխատանքներ նոր կառուցվող հրապարակների հողային հիմնատակի ուղղման,հարթեցման , ստոր գետնյա հոսանքի մալուխի կառուցման և մետաղական ճաղավանդակների հենասյուների տեղադրման նպատակով 3.լուսավորության ստորգետնյա մալուխի անցկացում 4.մետաղական ճաղավանդակների մոնտաժում խաղահրապարակում մինչև 1.5 մ բարձրությամբ 5.մետաղական ճաղավանդակների մոնտաժում մարզահրապարակում մինչև 3.0	դրամ	232000	232000	1	Ք.Ապարան	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 45-րդ օրացուցային օրը ներառյալ

		մ բարձրությամբ 6.արտաքին լուսավորության ցանցի կառուցում 7.հրապարակների ասֆալտապատում 8.բետոնային եզրաքարերի տեղադրում խաղա - մարզա հրապարակների արտաքին և տարանջատման պարագծով 9. բետոնային՝երկրորդ շերտը բաց մոխրագույն սալիկներով սալիկապատում 1.0 մ լայնությամբ հաշվարկված հրապարակների բետոնային եզրաքարերից 10.բազալտային եզրաքարերի տեղադրում սալիկապատման արտաքին պարագծով 11.մետաղական ճաղավանդակների ներկում 12.ասֆալտապատ խաղա-մարզա հրապարակների գունաներկում 13.խաղային և մարզական սարքավորումների և հարմարանքների տեղադրում 14.մարդատար ավտոմեքենաների կայանատեղիների կառուցում 50 մմ հաստության ասֆալտի տեղադրմամբ, մարզա-խաղա հրապարակների ընդհանուր երկարությաբ,2-կողմից 15 . մինչև աշխատանքային նախագծերի մեկնարկը պատվիրատուին ներկայացնել տարածքի վերաբերյալ 2 տարբեր լուծում նկարներով (ռենդեռ) 3 D մոդելավորում Աշխատանքների ծավալը 1.ապամոնտաժվող սարքավորումներ, հարմարանքներ հենասյուներ 40 կետ 2 հողային աշխատանքներ 892քմ/42.4 խմ 3.լուսավորություն						

		3.1 ստորգետնյա մալուխագիծ 130.0գծմ 3.2 արտաքին լուսավորություն 47.0գծմ 4.մետաղական 1.5 մ բարձրությամբ ճաղավանդակների մոնտաժում 74.0քմ 5.մետաղական 3.0 մ բարձրությամբ ճաղավանդակներ մոնտաժում 80.0քմ 6. ասֆալտապատում 892.0 քմ 7.բետոնային եզրաքարերի տեղադրում 240.0 գծմ 8.սալիկապատում 124.5 քմ 9.մետաղական ճաղավանդակների ներկում 267.0 քմ 10.խաղահրապարակի և մարզահրապարակի ասֆալտի ծածկույթի գունաներկում 644.0 քմ 11.խաղային մարզական սարքավորումների և հարմարանքների տեղադրում 14.0միավոր 12ասֆալտե ծածկույթով կայանատեղիների կառուցում 244.0 քմ **Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման պայմանները** 1.Նախագիծը մշակել ՀՀ-ում գործող ստանդարտների,նորմերի,հրահանգների պահանջներին համաձայն,ճանապարհային պատվածքիշերտերի հաստությունը և աշխատանքների ծավալները հիմնավորված՝հետազոտման ընթացքում ձեռք բերված ելակետային տվյալների վերլուծության հիման վրա և համապատասխանի գործող նորմերին 2.Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել 3 օրինակից 3.Նախագծի էսքիզային առաջարկի և նախագծա- նախահաշվային փաստաթղթերի						

		միջանկյալ և վերջնական համաձայնեցում Ապարանի համայնքապետարանի հետ 4.Ներկայացնել կառուցապատվող օբյեկտի ,դրա առանձին մասերի և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետ ներին ներկայացվող նվազագույն պահանջները 5. կառուցապատվող տեղամասում գոյություն ունեցող, գործող ինժեներական ենթակառույցների և կոմունիկացիաների անհրաժեշտության դեպքում վերակառուցման,վերանորոգման նախագծային լուծումների առաջարկություններ 5.Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային,տեխնիկական միջոցներին,աշխատան քային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջները,շինարարական աշխատանքների համար կազմել ընդհանուր և ըստ փուլերի առանձին ծավալաթերթ նախահաշիվ 6.Նախագիծը համաձայնացնել շահագրգիռ կազմակերպությունների հետ 7.Նախագիծը և նախահաշիվը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,հայերեն և ռուսերեն լեզուներով (ACAD PDF ֆորմատներով),ծավալաթերթերը,ամփոփագ րերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով						

		8.Նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարման գինը ՝մինչև նախահաշվային արժեքի 2% –ի չափով 9.Նախագծա-նախահաշվային աշխատանքների վճարումը կատարել դրանք փորձաքննության դրական եզրակացությունից հետո						

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Ապարանի համայնքապետարան	"Հազարաշեն" ՍՊԸ
Ք. Ապարան, Բաղրամյան 26	0014 ք. Երևան, Պ. Սևակի, 1
ՀՎՀՀ 05022969	"Հայբիզնեսբանկ" ՓԲԸ
ՀՀ Ֆին. Նախ. Գործառնական վարչություն	Հ/հ 11500821114211
ՀՀ 900450000079	ՀՎՀՀ 01816381
Համայնքի ղեկավար՝ Կ. Ենոքյան	Տնօրեն Ռ. Իգիթյան
________________ /ստորագրություն/	________________ /ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 2
«07» 05 2021 թ. կնքված
ՀՀ-ԱՄ-ԱՀ -ԳՀԽԱՇՁԲ-22/21 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/3	Ապարան քաղաքի Մ.Մաշտոց փողոցի թիվ 11 բազմաբնակարան բնակելի շենքի պատշգամբների թիթեղապատման,ներկման և ցեմենտ/ավազի շաղախով սվաղման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ				175000	175000	175000	175000	175000	175000	175000	175000	175000	175000

2	71241200/4	Ապարան քաղաքի Մ.Մաշտոց և Զ.Դարյան փողոցների թիվ 11 և թիվ 23 բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքում մանկական խաղահրապարակի և մարզահրապարակի կառուցման բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքներ				232000	232000	232000	232000	232000	232000	232000	232000	232000	232000

*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ապարանի համայնքապետարան
Քաղ. Ապարան, Բաղրամյան 26
ՀՎՀՀ 05022969
ՀՀ Ֆին. Նախ. Գործառնական վարչություն
ՀՀ 900450000079
Համայնքի ղեկավար՝ Կ.Էդիազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

"Հազարաշեն" ՍՊԸ
0014 ք. Երևան, Պ. Սևակի, 1
"Հայբիզնեսբանկ" ՓԲԸ
Հ/հ 11500821114211
ՀՎՀՀ 01816381
Տնօրեն Ռ. Իգիթյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« 07 » 05 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 07 » 05 2020 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը
Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն